


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպտոսի համար տրեկն. ուղ. զհ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ ստեղծման հրահր. 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր

ԼԵԱՌԻ ԵՒ ՕՐԵՆԵՐ

Մարդ մը որ օտար երկրի մը մէջ կը
հաստատուի՝ եթէ ոչ մշտնջենապէս հոն մնա-
լու, գոնէ անորոշ ժամանակ մը անկից չի հե-
ռանալու դիտումով՝ իր առաջին գործը կընէ
տեղական լեզուն սորվիլ, յետոյ՝ երկրին օ-
րէնքները:

Մենք, թէեւ ոչ գաղթային ժողովուրդ, բայց պարագայներու բերմամբ եւրոպայի, Ա-
մերիկայի ու Ասիայի զանազան կիզրոնները
ցրուած, ամենէն քիչ ըմբռնած ենք այս պէտ-
քը. տաան ամէն ի վեր եզրիպատ հաստատու-
ած հայեր կը ճանչնանք որոնք արաբերէն
տաար բառ չեն գիտեր, թէեւ կընան դեռ
տարիներով հոս մնալ, ու թերեւս հաստատու-
ուիլ իսկ: «Մէկը որքան լեզու գիտնայ՝ այն-
քան անգամ մարդ է» հին առածին կիրա-
ռութիւնը չէ որ պաշտպանել կուզենք այս
տողերով. մինակ, թերադրել տեսակ մը նա-
խանձանդութիւն՝ ուրիշներէն վար չի մնա-
լու. զբօսական պոռոյտի մը համար նեղու-
սի ամիսները այցելող եւրոպային պարզա-
պէս հաճոյք մը կը զգայ՝ Շէփերտ Օթէյին
կամ Կէլիլիէ Բալէսի սանգուսին վրայ ոտը
դրած վայրէկանէն հետաքրքրուիլ կարգ մը
գործնական բառերու և բացատրութիւններու
այնպէս որ Բուրգերը կամ Կիլիլի թանգա-
րանն այցելած ատեն արդէն իսկ տրված է
իր ուղղելիք հարցումները: Եթէ հարուստին
ու անցորդին համար քմահաճոյք մըն է այս
բան, արուեստ մը ընկերու, առուստուր մը ընկեր
կամ գործ մը փնտռելու և կիւղ օտարականին
համար տարրական պէտք մըն է: Պատահած
չէ՞ք Ֆէլլահներու ու եւրոպացիներու որոնք
սակարկութիւն մը կամ առուժախ մը ըրած
ստեն՝ փոխադարձաբար կուզեն իրարու լեզ-
ւով խօսիլ. տեղացին՝ ֆրանսերէն կամ անգ-
լիերէն ու եւրոպացին՝ արաբերէն: Եթէ մար-
մինը կօպտուի պոռոյտներէ, միտքն ալ կը
սրուի այդ տեսակ վարժութիւններէ. այս
մեղի ու թմրեցուցիչ կլիմային տակ՝ երկուքն
ալ կենդանի պահելու է:

Տեղական օրէնքներու վրայ տարրական
ծանօթութիւն մը ստանալու կարեւորութիւնը
այլապէս անհրաժեշտ է և կըմբռնուի ա՛նոց
համար միայն որոնք տուն տեղ և գործ ունին
օտար երկրի մը մէջ. ամեն խորհուրդ փառ-
տարանէն սպասելու պայմանը՝ թեթեւ հար-

բուսի մը առթիւ իսկ բժշկի գիտելու կը նմա-
նի. մարդ իր անձին բժիշկը ու գործին վա-
րչը ըլլալու է: Եզրիպատի օրէնքները, եւրո-
պայի ամենէն զարգացեալ ժողովուրդներու
օրէնքներուն վրայ ձեռուած, ուսումնասիրու-
թեան ընդարձակ նիւթ կընան մատակարարել
իրաւագիտութեան ճաշակ ունեցողներուն հա-
մար: Բայց անոնց հիմնական սկզբունքները
ու ընթացիկ կենսի մէջ պէտք եղած գործ-
նական տրամադրութիւնները կարծէ գիտնալ
ընդհանրապէս: Մեր համետ սահմանին մէջ,
ուղեցինք փորձ մը ընել զանոնք աստիճանաբար
ճանչցնելու մեր ընթերցողներուն. փաստաբան-
աշխատակից մը ստանձնած է այդ հոգը:

ՏԻՊԱՐ ԳԱՂՈՒԹ ՄԸ

Եզրիպատի Իպրահիմիա-Շարքիա գիւղա-
քաղաքի փոքրիկ հայ գաղութին վրայ մեղ
հաղորդուած հետեւեալ տեղեկութիւնները կը
հրատարակենք հաճութեամբ, խնդակցելով
այդ մոռցուած անկիւնը հաստատուած խումբ
մը հայերուն ընթերցասիրութեան ու կրթա-
սիրութեան վրայ որ կեդրոն տեղերու մէջ կը
պակտի շատ անգամ:

Իպրահիմիա-Շարքիա, 27 յուլիս

Ընդհանուր եզրիպատի մէջ, Գազիլէն և Աղբը-
սանցիլայէն վերջը, Իպրահիմիա-Շարքիան է որ ու-
նի, կարծեմ, իր հայկական զարոյցը, որ տաանի չափ
երկեսու աշակերտներ կուսանին մայրենի լեզուէն
դատ՝ գաղղիերէն ու արաբերէն և մէկ քանի կա-
րեն որ գիտութիւններ:

Սոյն գիւղաքաղաքի հայիւ հինգ ընտանիքէ
բաղկացած հայ գաղութը մարգարիտական գուռ
զգացումով իրարու հետ սերտիւ կապուած՝ համակ-
րելի խմբակ մը կը կազմեն, ազգային և կրօնական
նախանձանդութեամբ յարգելի, և տեստական
գործերու մէջ իրարու փոխադարձ հոգածութեամբ
գովելի:

Իր ապացոյց այստեղի հայերուն ընթերցասի-
րութեանը՝ բաւական է խնայել որ ասոնք կստա-
նան տաանըմէկ աեսակ հայերէն, երկու գաղղիերէն,
մէկ իտալերէն և մէկ արաբերէն լրագիրներ: Այս
հինգ տուն հայերէ սու պոթմ երեքը Փառու կը ստա-
նան: Գրեթէ բոլորն ալ իրենց սեպհական գրադարան-
ներն ունին, որոնց պարունակած գիրքերուն գու-
մարը չորս հարիւր կը հասնի և օր ըստ օրէ բող-
մանալու վրայ է:

Շնորհիւ երկու-երեք ազգայիններու համերաշխ
գործունէութեան՝ եթէ-եթէ տարիէ ի վեր այս
տեղի զարոյցը յարատեւ ընթացք մ'ունեցած է և
պիտի ունենայ որչափ ատեն որ անոր պէտքն զգա-
ւի ըլլայ: Հիմա միայն երկու անձիւր, տարին, ան-
հաւասար քանակութեամբ 120 անգլ. տիկ կուստն
երկու ուսուցիչներու, բայց զարոյցական ուրիշ տեա-
քերու ծախքէն:

Համետութեան զգացումին չփրատերէն հա-
մար զոնց կընեմ գրելու յիշեալ մեծարգոյ ազ-
գայնոց անունները:

Իպրահիմիա-Շարքիայի հայերուն համար զուար-
ճութիւններու ամենէն քաղցրագոյնն է, յուլիս
ամսոյ մէջ, աշակերտաց դասերու հարցարնութիւնն
ու ասոր յարակից զարոյցական փոքր հանգիստը, որ
պարզապէս ընտանեկան տնտեսութեան երեւոյթ
մ'ունի: Ամեն սեռէ ու հասակէ հայեր իրենց պարտը
անհրաժեշտ կը համարին համախմբուիլ բաւական
ընդարձակ սրահի մը մէջ: Համբերատար յոծարու-
թեամբ և սիրով կուենկիւրեն հարց ու պատաս-
խաններուն՝ ուսուցիչներու և աշակերտաց: Մասնազ
րեւաններէ արտասանուած արձակ և ստանալու
գրութիւններ, ազգային երգերու գեղջկական փոք-
րիկ նուագահանգիստ մը վերջապէս կը յաղեն սր-
տերն ու հոգիները անուշակ տալաւորութեամբ ազ-
գայնութեամբ: Նմանորինակ հանգիստ մը ամսուս
25ին, կիրակի օրը, տեղի ունեցաւ: Նախորդ տա-
րիներու պէս այս տարի ալ ներկայ եղողները զոհ
մնային:

Մ. Շ.

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Այրի տիկին Աննա Բաւմիի նամակը,
գոր հրատարակեցիք իմ խոր քաղաքի քաղաքի
դաշնակցաւ անշուշտ պարզ յայտարարութեան
մը պէս որ շարք մը հասարակեալ երկրորդ
սպագրութեան համար յաճախորդագրութեան
հրահր կը կարգայ: Այդ գրիւնը հեղինակին
անունը իսկ, իբրեւ մեր ազգային մեծագոյն
վիպասանը, արեւելք քունդ հանելու բնու-
թիւնն ունի: Բաւմիի վեպերը իմ ուղի մը
բացին հայ գրականութեան համար, ուր
վեպը իր առանձին տեղն ունի ու ազգային-
պատմական գրութեան հոգածութեամբ: «Կայ-
ծեալ» ու հեղինակը գիտցաւ միացունել զա-
նոնք եւ ազգային հետաքրքրութիւն մը որ ան-
յազ, անգուսպ կը դառնայ քիչ շատ զգացում
ու զարգացում ունեցող ընթերցողին համար:

Պատահե՞ր է ձեզի գտնուիլ տեղ մը ուր
սեղանին վրայ գտնուի, գրիւնը դեզի մը
հետ, Բաւմիի մէկ հատորը. առաջնորդներ
միջոց անունն է, ինչ որ ալ ըլլայ միասնեան
համարը. զայն ձեռք անցունելու տեսլը
այնքան քաղաքի է որ ձեռքի մը մը կը
սկսի երէ ոչ իւրացնան, գոնէ առժամայ
ստացնան: Տեսեալ եւիք դարձական տպագրու-
ման «Խեղ»-ը կամ «Չալալէսի»-ը քաղց-
նուն տակ, կ'երթային առանձնական իրենց
սան անկիւնը, մոռնալով միեւնի իսկ ըն-
թերի ժամը ու գիշերուան փունը. պարզ
արհեստարարներ, խանութպաններ՝ որոնք
միջոց ու դիւրութիւն յունեցալով տեղ ըլլայ

այդ վերջերս, կը շատանային առիթը ներկայացած ասե՛ն՝ քանայ անոնցմէ մեկուն որեւէ մէկ գոյիսը ու կարգաւ արագ արագ, առանց վերջն ու սկիզբը գիտնալու, քայց յաւ քան մը գոնէ մասամբ ճաշակողի հանոյ՞նլ :

Ռուսական գրականութիւնը, որուն ազգային-քանաստեղծութեան փառքերէն մեկը կը կազմէ Քանար Քարիպա, ազգային-փառասանութեան ճիւղին մէջ աշխատաւորուեցաւ Բաժճիի գրչոյ՞նլ :

Վիպասանին այրին՝ քրիստոնական ուսանն առանձնացած՝ շարունակող կը հանդիսանայ իր մեծանուն անուննոյն գործերուն, հսկելոյ, աշխատելոյ անոնց սպագրութեան ու ծաւալման աշխարհի ամեն կողմն ուր հայ մը կայ . այդ աշխարհի կիւնը՝ իր երկու որբ զաւակներուն նման կը գորգորայ նաեւ Բաժճիի մտաւորական ծրնունդներուն վրայ, զորս այսօր յառաջադրուոյ մը ու պատկերոյ մը կը ճոխացուի, վաղը ժողովրդական դիւանաստեղծի սպագրութիւնոյ մը: Իր հոգածութիւնը ու աշխատանքը ապարդիւն չի պիտի մնան. անոնց յայտնութիւնն ապահովուած կը նկատուի: Այն պարագաներէն մեկուն առջեւ չեմք գրեւորուիր ուր ապագայ սպագրութեան մը կը քաժանորդագրուի՞նք՝ հեղինակ մը քաջաշէրտեալ համար. աշ առիթ մըն է որ կը ներկայանայ Բաժճիի գործերն ունենալու՝ դիւրանալէի պայմաններով. եթէ անոնցմէ օգտուելով միեւնոյն ասե՛ն նպաստած պիտի ըլլանք անոնց հրատարակման գործին, որոնց ձեռնարկած է վիպասանին այրին իր նիւթական համեմատ միջոցներով, կրկնապէս հաճելի ու ազնիւ փոքրոքութիւն մը յցուցած պիտի ըլլանք:

Եզրիսահայերն աշ անհասն չի պիտի մնան անշուշտ այս ազգային-գրական ձեռնարկութեան դիւրութիւն մը ընծայելէ:

ՄՐՑԱՆԱԿ. ՄՐՑԱՆԱԿ

Իզմիրեանցիներ . . . անկից ուրիշ :
Վաթիւնն ուսի . . . այն ալ տարին անգամ մը . . . չորս միլիոն հոգիէ յաղկացած ազգի մը վրայ ըստ ժաննի . . . խոստովանեցէր որ շատ չէ : Իզմիրեանցի տակը՝ Այվազեանի մէկ անշարժ կողմունքն է որբ. զաւակն որ միլիոն հոգեւ, bon an, mal an, տարին տարը ուսի կը բերէ այդ յարաշարժ ախտադրեացին որ հակառակ երկու հարկուր բռնաբերեց անգամ՝ Ե. Բուսալէմ երթալուն, դեռ Հանի Աբրահամ կոչուելու քրիստոնեայիցէ պատելն չէ արժանացած :
Թէեւ այս տարի մեր բարեկամին համար mal an մը եղաւ, քայց հոգ չէ . եկող տարուան համար մեծ յոյսեր ունի շնորհիւ այն երկասիրութեան զոր պատրաստելու վրայ է և որուն անունը պիտի ըլլայ « Պատմութիւն հայ գերածականութեան, սկսեալ խաչից ամիրայի նիւպակէն մինչեւ մերիցն » :
Անցողորար այս պիտի զիտուութիւնը Իզմիրեանցի կողմին տակիւն ընելէ վերջը, ազգասիրական գործ մը ընել կը կարծեմ մրցանակներու ծրագիր մը պատրաստելով և յանձնարարելով անոր գործողութիւնը ամեն անոնց որ Իզմիրեանցի պէս մեծ բարեւարժ տիտղոսին արժանանալ կուզեն :

ԾՐԱԳԻՐ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՒ

- Մրցանակներ տալ .
1. Այն թագաւորներու որ ազգային գործերը իրենցինն պէս նկատուելու չափ առաջ չեն երթար ազգասիրութեան մէջ :
2. Երկու հարկուր քանդակեց անգամ՝ Խափա գացողի մը որ գոնէ անգամ մը խելագար չէ :
3. Ինքնիրենը թերթի մը լատինագր գրուելին :
4. Առանց խնդրագրի հայ թատրոնը յանձնառու ներուն :
5. Այն գրագէտին որ բաղութիւնը անեցած է . . . անօթութենէ չի մնանք :
6. Իրենց ամուսինն դէ՛ եզրը կ'ենթադրեն :
(Շարունակելի)
Ամենէն մեծ մրցանակը տալու է հարկուրին 20է պակաս տոկոս առնող վաշխառուներուն :
Ներքին չէ՞ արդեօք առաջարկել Ազնուաշուր Տիւթիկէն և ինչո՞ք Սիմոն Բալասանի որ այս մրցանակը ինք հաստատէ, քանի որ ինքը ամենէն շատ ձուկն է ձանչալ մեր սեղանադրական գործերը :
Ի՞նչ մեր այս առաջարկութիւնը ընդունուի և մեր իզմիրեանցի, այն ատեն ազգը պիտի ունենայ Իզմիրեանցի մրցանակէն անմիջապէս ետքը Սրամայուեանցի մրցանակ մը :

ՌԱՏԱՄԷՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ երեսփոխանական ժողովոյ յուլիս 29ի նստին մէջ Պ. Ֆրեն հարցում ուղղեց Պ. Քրըքլընի թէ Թորթի կոտորածին հետեւանօք զրկուած արտասովոր դատարանին կողմէ մահուան դատապարտուած տասնհինգ իսլամներուն պատիժը գործադրուեցա՞ւ : Ատենարանը յիշեցուց թէ յիշեալ դատարանին վճիռը հաստատուած ըլլալով նախարարաց խորհուրդին կողմէ, ի Կ. Պոլիս, երկար ատեն ի վեր Սուլթանին վաւերացման կը սպասէր և հարցուց թէ ի՞նչ է այս յապաղման պատճառը :

Պ. Քրըքլըն յայտարարեց թէ դատապարտեալներէն ո՛չ մէկին մահու պատիժը գործադրուած չէ տակաւին : Դալով Պ. Ֆրենի երկրորդ հարցման, արտաքին գործոց նախարարութեան խորհրդականն յարեց թէ անոր պատասխանելու վիճակի մէջ չէ :

— Կ. Պոլսէն կը հեռագրեն Սրահաւաթին թէ օտարականութեան ընդմիջման ծաւալ պաշտօնեաներ Բրիտանիո (Մեծ Կղզի) զրկուել են որ « Ժէօն-Թիւրք » կուսակցութեան կեդրոններէն մէկը կը նկատուի և թէ շատ մը ձեռք

բախտութիւններ կատարուել են : Օսմ. կառավարութիւնը կը շարունակէ ամրացնել մայրաքաղաքին շրջակայքը, իւր թէ եւրոպական տէրութեանց համաձայնութենէն անարկապի մը սպասէր :

Դարձեալ Կ. Պոլսէն կը հեռագրեն Նաչե Ֆրայէ Բրեսէին յուլիս 24 թուականով, թէ 32 վաշտ թուրք զինուոր պատրաստ կը սպասեն կրեալ զրկուելու համար : Ասոնք Քալալայէն նաւ պիտի դուրսնան, երբ Դուռը ապահով ըլլայ որ ժողովաւորը չպիտի ընդդիմանան անոնց ցամաք ելլելուն :

— Պարծոյններ կան միշտ թէ Թուրքիոյ նկատմամբ Ռուսիոյ հետեւած հաշտ քաղաքականութիւնը յեղաշրջում մը կրելու մօտ է, Գերմանիոյ ձեռք բերած գերակշիռ դիրքին պատճառաւ : Իրեւ հետաքրքրական տեղեկութեանց շարք մը կը թարգմանենք Բեդրուպուրկէն բարեկեան թերթի մը ուղղուած թղթակցութեան մը հետեւեալ մասերը .

Դրան ընթացքը վերջ ի վերջոյ կատարուի ու նոյն խի ուրիշ թուրքահէճէն պատերազմին սկիզբը նպատակաւ չէին Յունաստանի : Համապատասխան թերթերը որոնք ինչ մը ցուրտ լեզու կը գործածէին յայտնուած նկատմամբ՝ այս վերջիններուն պուլկարներուն հետ անեցած կոխմանուն պատճառաւ, հիմայ քայց ի քայց կը պաշտօնաւորեն զինու. զորութեամբ միջամտութիւն մը ի նպատակ Յունաստանի : Մինչեւ իսկ ի խոստի Ռուսիոյ և Թուրքիոյ միջեւ պատերազմի մը ծագման պատահականութեան վրայ :

Կարգ մը դէպքեր յատկանշական են Վերջին օրերս Չարը իր մօտ հրաւիրեց երկուստեան նախարար Պ. Ուիթթը . յաւանդութիւն չունի՞մք ըսելու թէ ի՞նչ էր այս տեսակցութեան նպատակը . սա միայն գիտեմ որ Պ. Ուիթթ պատերազմական ու ծովային նախարարներուն տրամադրութեան ներքեւ զորք է այն բոլոր գումարները զորս ասոնք կը խնդրէին երկու շարժել ի վեր և ինչ կը մերժէր :

Ռուսիոյ Արտաքին գործոց նախարար Պ. Մուրաւիէֆ ալ հրահանգ ստացեր է եղբւր կայսեր կողմէ՝ խիստ դիտողութիւններ ուղղել Դրան և յայտարարել որ եթէ շարունակէ ձգձգել հաշտութեան կնքումը, Ռուսիա խիստ միջոցներու դիմելու հարկին մէջ պիտի գտնուի :

Դէթ մինչեւ այս վայրկեանս, սոյն տեղեկութիւններն հաստատուող ո՛ր և է դէպք չի պատահեցաւ և Ռուսիա կը շարունակէ, միւս մեծ Տէրութիւններուն հետ, Յունաստանի համար կործանարար քաղաքականութեան մը հետեւիլ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ Աղեքսանդրիոյ դադլթական նոյն Յանձնաժողովը, որուն արամագրի զրամն ամբողջովին սպասած է, իր հաջնները փակած ու պատրաստած է և հրատարակութեան պիտի ստայ :

1896 սեպտեմբերէն ի վեր՝ յիշեալ Յանձնաժողովին կողմէ հանգանակուած գումարը կը հասնի 2500 տակի :

Խոխիւնի վարչութիւնը, որ դադլթական հայերը ձրիարար իրենց անդերը վերադարձունելէ հրաժարած էր, վերջերս Աղեքսանդրիոյ Յանձնաժողովին դիմումներուն վրայ վերադարձնաւ առած է ամեն շարժում իր շրջանաւորներով յիստեն հոգի փոխադրել ի Կ. Պոլիս,

Յ Ո Յ Ձ Ք

ԱՌ ՏԻՎԻՆ Մ. Զ.

Կը յիշե՞ս գիշեր մ'անուշիկ,
Երբ շող ու շաղ տար լուսին.
Շրջիկն մեմք յուշիկ յուշիկ,
Ծովափն ի վեր միասին:

Չկար աղմուկ, չկար ձայն
Եւ ոչ թռչնոյ մը գեղգեղ,
Ամայի եր ծովափն այն,
Ուր կայնեցանք միասին:

Հորիզոնին մէջ հեռու՝
Փայլիկին լոյս ու կայծ.
Աչօքդ անուշ վառվառն
Լափըփիքի գնալամ:

Վրան նալքիդ վեսահար,
Թռչքիկն հոպ ի հոպ
Քաղցրիկ հովիկն որ կուգար
Գգուել վարսիցդ խաղաղ

Սուրբ գեղիւն, ծփար ծով,
Ուր լուսնկան ու ասդեր,
Դողդղային փոփ փոփ,
Երբ նայուածքդ հոն յառէր:

Դարձար ինձի եւ — ինչե՛ր
Կ'զգաս քսիք դու . . .
Հոգիս յուզուած, սրբս յորդած եր
Եւ չ'եսես քե կուլամ:
ԱՐՄԱ

Պէրուժ, Մէրսին, և այն բոլոր նաւահանգիստները ուր կը բանին իր շոգենաւներ :

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ ԳԱՀԻՐԷԻ

Կրթարանիս վեցամսեայ հարցաքննութիւններն այսօր աւարտեցան և ուշակերտներն արձակուեցան մինչեւ յառաջիկայ չորեքշաբթի Օգոստոս 4: Այս նուէրու Կրթարանին զատուանդութիւնները պիտի շարունակուին առէն որ ստուգուեն ժամը 7 1/2էն մինչեւ 12 և 2էն մինչեւ 4 :

Այս առթիւ պարտականութիւն կ'զգամ մասնաւոր շնորհակալիս հարգողելու բնիչ յանձնախորհրդի բոլոր պատանդանոց , որք անուշադրութեամբ կատարեցին իրենց յանձնուած փափուկ պաշտօնը , քաջ գնահատելով Կրթարանիս երկուստեայ ուշակերտաց իրական կարողութիւնը :

Ոչ նուազ շնորհակալեաց տառերկայ եղան այն ամեն ծնողք ու Կրթարանին համակրող ուսուցիչներ , ազգային որք հարցաքննութեան ընթացքին մէջ իրենց յանձնարարի այցելութեամբ պատուեցին զիս :

Հիմնադիր-տնօրէն

Գահիրէ 18/30 յուլիս :

Ս. ԲԻԻՐԱՏ

Ա. Զ. Դ.

Ուսուցչուհի մը որ Պոլսոյ կարեւոր քաղաքի մը բարձրագոյն փարժարաններէն միոյն մէջ պաշտօն վարած է եւ երկու ամսէ ի վեր քաղաքս կը գտնուի, կը փափաքի հայերէնի դասեր տալ տուներու մէջ այցելութեամբ:

Այն ծնողք որ իրենց զաւակներն օտար վարժարան կը դրկեն եւ որ մայրենի լեզուն անոնց ուսուցանել տալ կուզեն, առիթն կ'ընան օգտուիլ:

Դիմել ՓԱՐՈՍԻ Խմբագրատնոց:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բարձր. Խորհիւն այսօր կամ վաղը կը մեկնի Աղբաւանդիւղէն իր Սաճա-Եր-Պահր զօրանաւով ծովային պտոյտ մը կատարելու համար : Ուրբաթ պիտի չեւադարանայ :

— Ընդհանուր եգիպտոսի առողջապահական վիճակը լաւ է միշտ : Բանի մը դիւղերու մէջ ծագկախտ կայ միայն , ինչպէս սովորաբար կը պատահի այս եղանակին :

Էլ-Թօր մարբանոցին մէջ որ և է կասկածելի դէպք չէ պատահած շարժմաներէ ի վեր ու Հնդկաստանէն ալ կը ծանուցանեն թէ ժանտախտն ու քոլերան զգալապէս նուազած են :

— Տեղական արար թերթերը կը պատմեն թէ խումբ մը հարուստ եգիպտացիներ որոնք օգափոխութեան համար Դամասկոս գացած էին , Պէրուժի կուսակալին հրամանով հրաւիրուելու են մեկնիլ անկից : Կ'երեւայ թէ քաղաքական նկատումներ կան այս արտաքսման մէջ , որոնք զանազան կերպով կը մեկնուին : Էլ-Մուայեաթի խօսքին նայելով , եգիպտական բանակին մէջ ծառայող անգլիացի սպայ մը , որ ինքն ալ Դամասկոս գացած էր , յաճախակի այցելութիւններ կուտայ եղեր այդ եգիպտացիներուն :

— Թայիվին ու Կրէյվիֆ պատկերադարձութիւն կոչուէ յատուկ թղթակիցներ եկած են եգիպտոս , Սուսանի արշաւանքին հետեւելու համար :

— Կըսուի թէ եգիպտական երկաթուղիներու վարչութիւնը մտադիր է ջնջել երթեւեկի տոմսերու դրութիւնը , իսկ ասոր փոխարէն՝ կարեւոր զեղչ մը ընել ուղեւորութեան տոմսերու գինին վրայ :

— Էլ-Ահրամ կը կարծէ որ եթէ օգերը

այսպէս շարունակեն մինչեւ օգոստոսի 15 , այս տարուան բամբակի մշակութիւնը անցեալ տարուանին վրայ 20 0/0 գերազանց պիտի ըլլայ :

— Երէկ Մէսաթըրիի Քայէսօնիէն շոգենաւով Հանրի ԴՕՈՒՅան իշխանը Սիւէզ հասաւ և հաւանաբար այսօր Գահիրէ կը ժամանէ :

Ֆրանսական թերթերու խօսքին նայելով , իշխանը , որ Հապէշաստանէն կուգայ , Մէնէլիքի ինքնագիր մէկ նամակը կը բերէ Բարձր. Խորհիւն :

— Յաւաջիկայ օգոստոս 3էն Քաֆր-Չա-եաթի և Ալթիէի մէջտեղ շոգենաւային երթեւեկութիւնները պիտի վերսկսին :

ԹՈՒՐԲԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Երէկ իրիկունսն ու այս առտուան հեռագիրները նորէն յուսատու կերեւին հաշտութեան կնքման համար , բաւական է որ դարձեալ անակնկալ խզում մը առաջ չի գայ վերջին վայրկեանին : Եթէ իրօք հաշտութիւնը կնքուի իսկ , Յունաստան չէ որ նպատաւորուած պիտի ըլլայ անոր պայմաններէն , քանի որ իր երեւումովը եւրոպական քննդրոյի տակ պիտի առնուի՝ Գերմանիոյ պահանջմամբ :

Կրէտէի մէջ ալ խռովութիւններ ու կրօններ անպակաս են միշտ , ու կացութիւնն այն աստիճան չիթի՞ որ Մալթաէն անգլիական զօրաց վաշտ մը պատրաստ կը կենայ՝ հոն խրկուելու համար :

Աւասիկ թէ՛ դեսպանախորհուրդին բանակցութեանց և թէ՛ Կրէտէի վիճակին նշկատմամբ հասած նորագոյն հեռագիրները .

Կ. Պոլիս, 28 յուլիս. — Գերմանիա վերստին կարգիլէ արտերազմական տուգանքի խնդրոյն կարգադրութիւնը , սինդիկատ որ նախ և առաջ նկատողութեան առնուին աւելի հին պահանջատէրերու (գերմանացի արժեթէրերու) շահերը :

Կ. Պոլիս, 29 յուլիս. — Ռուսիա կընդգիծանայ Գերմանիոյ առաջարկութեան՝ ի մասին արտերազմական տուգանքի : Գերմանական դեսպանը իր կուսովարութենէն հրահանգ խնդրեց :

Կ. Պոլիս, 29 յուլիս. — Գերմանները խմբագրեցին արտերազմական տուգանքի վերաբերեալ յօդուածն այն կերպով որ գոհացում կուտայ Գերմանիոյ : Կը կարծուի թէ հաշտութեան պայմանները վերջնապէս պիտի կարգադրուին շարաթ (այսօր) :

Կ. Պոլիս, 30 յուլիս. — Հաշտութեան նախնական պայմաններուն ստորագրուած անմիջական կերպով տեղի պիտի ունենայ : Միտակ Յունաստանի պատասխանին կը սպասուի , արտերազմական տուգանքի մասնավճարներու թուականները որոշելու համար :

* * *

Կրէտէ, 29 յուլիս. — Յաճախակի կոտորածներ տեղի կ'ունենան թուրք և եւրոպացի զինուորներուն միջեւ : Ճէվաա փաշա խիստ միջոցներ ձեռք կ'առնէ՝ խաղաղութեան գրգռումը զսպելու համար :

Լոնտոն, 30 յուլիս. — Մալթա գտնուող «Լանքաշայր» զօրագունդին առաջին վաշտը հրոման ստացած է պատրաստ գտնուիլ՝ Կրէտէ երթալու :

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Մ. Կ. Արմանթ. — Շնորհակալութիւն ձեր նամակին համար :

Ս. Օ. Վատի-Հալֆա. — Ձեր ուզած գրքերը դեռ չենք ստացած , բայց պիտի ջանանք ձեռք անցընել եւ ձեզ դրկել :

Հ. . . Գահիրէ, — Անճամօքներու յօդուածները հրատարակելու սովորութիւնը չունինք :

Տիկին Զ. . . Գահիրէ. — «Փարոս»ը ձեզի օգտակար չի կրնար ըլլալ , կը ներքի՞ որ Գրէթ-Սիմոնը ձեզ յանձնարարենք :

ԱՆՇԱՐԺ ԳՐԱԻ (HYPOTHEQUE)

Տեղւոյս պատուաւոր հայ վաճառականներէն յաճախորդներէն մէկուն դատական թուղթերու մասին ըրած դիտողութենէս հանրութիւնն ալ օգտակար ելաւ , կը գրեմ սոյն ծանօթութիւնը անշարժ գրաւի նկատմամբ :

Պարտատիրոջ իրաւունքը ապահովելու համար , ամենալաւ միջոց է անշարժ գրաւի գործողութիւնը : Բայց այս գործողութիւնը լսարոյթին կը կորսնցնէ իւր զօրութիւնը , երբ գրաւի մուրհակը արձանագրել չտրուի բնագրաց դիւանին մէջ (greffe) :

Կրնայ պատահիլ , որ գրաւատուն՝ ուրիշ անձի մըն ալ գրաւի տայ իւր անշարժ կալուածը օրինական արձանագրութեամբ , որով առաջին գրաւատուն՝ մուրհակը արձանագրուած չըլլալուն համար կը զրկուի իւր իրաւունքէն յիշեալ երկրորդ գրաւատուն հանդէպ :

Մուրհակներու թուականը այն ատեն կարեւորութիւն կունենայ երբ երկու մուրհակներն ալ միանգամայն արձանագրուած չլինին . ահա այն ատեն հինը կը ջնջէ նորը :

Եգիպտաբնակ նոր հայ գաղթականութիւնը մասնաւոր ուշադրութեամբ վարուելու է սոյնօրինակ օրինական գործողութեանց մէջ . որովհետեւ , Տաճկաստանի շէյխերու երկու վկայով ամէն բան հաստատուելու հրաշալի մէթոդը հոս փարայ չընեն :

Վնուպէկ Ասեմի Փասաբան

Գահիրէ 29 յուլիս

Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

ԵՐԿՈՒ ԳՆՈՒՆՆԵՐԸ

Մօտակոյ անկողնոյ մը արահայկին վերեւ հաստատուած , այդ երկու գլուխներն ինձ կը նային անթորթ ու անծպիտ աչքերով . Շատ անգամ , ո՛հ , շատ անգամ՝ կ'երեւին ինձ անոնք , այդ գլուխներն անխորան անմարմին , բայց որոյ շարունակութիւնը կ'ենթադրեմ կամ կ'երեւակայեմ սրահակին ետեւը , վարը , գողցեալ ժողովի մը մէջ պարանոցով աղ , մշու չի մը որ անհունութեան և անեզր անսահման յաւիտենականութեան մը բոլորն ունի : Եւ իրարու կը նմանին երկուորեակներու չափ :

Եւ մին այդ գլուխներէն , շատ աւելի նիհար քան միւսն , տեգոյն , փոստցած աչքերով , երկթապած ու տերով թուղթի պէս ճերմակ աւելի գանկի մը երեւոյթն ունի , բայց չի ժպտիր , որովհետեւ , քստմնէլ՝ հակասութիւն , գանկերը կը ժպտին : Տրտում է անոր նայուածքը նման հիւսնդի մը նայուածքին , որ գիտէ թէ պիտի մեռնի . հատկապէս թեման տըրտմութիւն մը , որուն ետեւէն սակայն զայրոյթի բոցեր կը նշխարեն , և կ'ըսես թէ այդ ցատուը հրդեհուած է , այդ գրեթէ մեռած կեանքին մէջ , ի զուր ակնկալուած վրէժխնդրութենէ մը կամ որ և է ընդունայն սպասումի մը : Եւ արդարեւ , չգիտեմ ինչու ակներեւ է որ , երկար , անսահմանութեան չափ երկար ժամանակէ ի վեր , այդ խորին հայեցողութեան կը սպասէ բանի մը որ չի գար . աղեկէ՞զ սպասումն , հանգուցաւորապ որքի մը ակնկալութեան , որ այնչափ մոտաւ է որ չէ հասկցած թէ հայրն ու մայրը անգործ մեկնած են , և կականաբարձ ու արտասուալից , կը սարսէ անոնց վերադարձին . . . :

Եւ միւս գլուխը , ո՛հ , միւս գլուխը , թերեւս աւելի տոտիլ կերպարանով , թերեւս նուազ արիւրատեսիլ , շատ աւելի տրտում է , կը զգաս : Կը զգաս նաեւ , աղետալի՜ բան , թէ բարեկամի մը ,

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.—
Կանխավճար արժեթուղթերու վրայ.— Կստան-
ձնէ յաճախորդներու հաշույն համար գան-
ձումներ ընել Եգիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարզեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով :
Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դի-
մել Պարզ փողոց Եգիպտական հեռագրատան դէմ
Բէսմագոյլու դրամատունը :

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօղպէրիյէ, Պիլպիւրեանի օթէլին քովըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուկէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Սմիւր 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Սմիւր 1,2,3 կգ.	Էրպրէս 1, 2 կգ.	Սմիւր 1,2,3 կգ.	Էրպրէս 1, 2 կգ.	Սմիւր 1 2 3 կարգ	
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա)	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհար	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Սմիւր 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Սմիւր 1,2,3 կգ.	Էրպրէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Սմիւր 1,2,3 կգ.	Էրպրէս 1 2 կգ.	Սմիւր 1 2 3 կարգ	
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհար	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 45	8 6	1 9
Թանթա)	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա)	երեկոյ 12 28	7 48	» կայարան	» —	3 30
	մեկ. 12 33	7 53	Խամպիլա	» 1 20	7 5
Ջակարթ)	ժամ. 1 34	8 54	Ջակարթ)	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Խամպիլա	մեկ. 3 40	1 —	Պէնհա)	ժամ. 4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35

մտերմի մը ժպտը կուգէ ժպտիլ քեզ ու չի կրնար
աւա՞ղ : Եւ արցունքներ կ'իսով չափ կը վարագու-
րեն այդ պիւշ նայուածքն ու գիտես թէ այդ տը-
ցունքները, անուշ յիշատակներու աղբիւրէն բխած,
քարացած են ու չեն կարող հոսիլ. տարօրինակ,
անուր, դժոխային շունչ մը, որ ամեն բան ցիր
ու ցան ըրաւ, անցած է անոնց վրայէն և չի ա-
քարերն յորինած է դանոնք այդ ամայացած ու
թափուր բանին, ուր ցուրտ, ցուրտ միայնութիւնը
կը թագաւորէ այժմ և անպարփախելի կարօտը ու
անճառելի վիշտը : Կըսես թէ այդ անթափ նայ-
ուածքներով զլիսուն ներքեւէն, թաղակներ զոր չես
տեսներ, կը կարկառին դէպ ի քեզ և կը ձգտին
ողջագուրել սիրելիներ որ չկան :

Ու շատ անգամ, շատ անգամ կերելին ինձ
անոնք, այդ գլուխներն անխիւս և անխորհիւ և
ես վիժատառեալ, կը հարցնեմ անոնց ձայնով մը.
որ գողցես անդունդներէն կը հասնի ակամօյա,
խուպած, տկարացած, հեւ ի հեւ, մղձաւորն մէջ
արձակուած ճիւղերու նման. « Ի՞նչ կուգէք ինձմէ,
տխուր կերպարաններ. ինչո՞ւ կը սեւեռէք իմ վրայ
ձեր սառած ու սրտացած նայուածքները, գիշերային
անուրջներու ոգիներն էք դուք, որ անդադրեալ մա-
նուկ հասակէս ի վեր նորանշան ու անասելի այցե-
լութիւններ կուտայ ինձ յաճախ և շատ անգամներ
ապրիլ տուիք ինձ կեանքով մը, թէպէտ մէջադեպ
ու տարտամ, թէպէտ անձգբոսելի և օգտին, բայց
զոր յետոյ յաւիտեանս ապրիլ բաղձացի իրականու-
թեան և արթնութեան միջոցին, այնչափ վարդե-
րանգ էր այն և այնչափ լի անպատմելի երանու-
թեամբ և այնչափ զերծ այն գծուծ բաներէն որոնց-
մով լեցուն է այս աշխարհը :

« Ի՞նչ կուգէք ինձմէ, աւա՞ղ և ինչո՞ւ ինձ ըսել
կուգէք թէ դուք շատ աւելի վեր, շատ աւելի մեծ
էք քան այն մութ ու պիղծ շունչը որ յաջողեցաւ
սակայն ձեր վճիռ նայուածքը դառն կայականերով
սքողել ու կնճռուտել ձեր սուրբ ճակատը անուր մոր-
մոքներով : Ի՞նչ կուգէք ինձմէ և ինչո՞ւ կը կռէք
իմ վրայ այդ նայուածքները որ ցրտասարսուռ նե-
տերու նման կը միսին ծոցիս մէջ և երակներուս մէջ
կ'ուծացնեն գայլութեան տաքութիւնը և այնպէս կը
նեն որ ձեր քարեղէն էութեան մի մասը կը դառնամ
և կ'զգամ հոգեւոր մէջ ու անապատացած սրտիս մէջ
ուր կը լսեն ամեն տրոփմունք և բարսմունք, Ներ-
քովանդակ կակիծն ու մորմոր ու կուլում ձեր բոլոր
արցունքները : Ըսէք ինձի ո՞վ էք դուք : »

Ու չեն տար պատասխան :
Բայց ես վիճի մը մէջ դահլիճի ձայնի մը կայ-
ծականման սրտտառութեամբ և երագալուր ակուն-
ջով, կ'ըմբռնեմ սա ձայներուն հսկիւր այդ կիրի
նման սպիտակ շրթներէն :

« Ես քու եղբայրդ եմ մահացած : Ես քու եղ-
բայրդ եմ վտարանդի քեզ նման : »

Յ. ՍԵԹԵԱՆ

ՄԻՇՐԱՆ ԿԻՐՃԵԱՆ

ՀԱՅ ԴԵՐՁԱԿ

ՏԱՐԱՄԱ ԱՊՏ-ԷԼԷՄԵՆՏ

Կը պատրաստէ ընտիր ճաշերով եւ չափաւոր գը-
նեով հազուադէպ արանց համար :

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքսի, մոր-
թի եւ ջղային հիւանդութեանց : Կ'ընդունի իրեն
դիմող հիւանդները Մեղոն Զահար, Շեքիւրս Զօքիի
հիւրդ դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10-էն 12
եւ կէս օրէն վերջ 3-էն 5 : Բոլոր վկայեալ աղբիւսք
ձրի կը դարմանուին :

ԲԻԻԶԱՆԴ ՓԱՓԱՋԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հա-
սարակութեան թէ Պազար Մուրուրի մէջ
խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ
և ծեծուած խահվէ պիտի ծախուի սովորա-
կան գներով :

Այս խանութին մէջ կան նաեւ զովա-
ցուցիչ ըմպելիներ :

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի